Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Թեղենիքի Վ. Ջինիշյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (20 դասաժամ), հասարակագիտության (6 դասաժամ), ինֆորմատիկայի (5 դասաժամ), բնապահպանության (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում՝ (Ձև 1),
2. մեկ լուսանկար՝ 3×4 չափի ,
3. բարձրագույն կրթության հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
4. անձը հաստատող փաստաթուղթ,
5. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
6. ինքնակենսագրություն (Ձև 5),
7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/
10. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում :Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **մայիսի 31-ից մինչև հունիսի 13-ը ներառյալ**, ամեն օր՝ 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. հունիսի 20-ին՝ժամը 13:00-ին**՝ Թեղենիքի Վ. Ջինիշյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ,Նոր Հաճըն համայնք, գ. Թեղենիք, 1-ին փողոց, 20: Տեղեկությունների համար զանգահարել՝ (0224) 6-13-84, (098) 10-63-06 հեռախոսահամարներով :

Թեղենիքի միջնակարգ դպրոցի տնօրինություն